

ներու մէջ, այնպէս որ չէնքերու նոր, այսինքն չորրորդ, պլոքի մը ձեռնարկութիւնը ապահովուած կարելի է նկատել:

● Դր. 25 հոկտ.— Աւատրիական նոր հիւպատուոր, Պ. Խոժն Եօրտա իր առաջին այցելութիւնը առաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ պատուով ընդունեց զինքը:

● Եղ. 26 հոկտ.— Կիւլգէնիեան Մատենադարանի կահաւարուման գլխաւոր մասը լրացաւ:

● Ուր. 27 հոկտ.— Ս. Պատրիարքը, Պ. Նուըրեանի ընկերակցութեամբ փոխադարձ այցելութեան գնաց Աւատրիական հիւպատուուին:

● Եր. 28 հոկտ.— Աւետարանչաց տօնին առմիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան տաճարի բակի հայապատկան Ս. Յովհաննէս մատուուին մէջ:

● Կիր. 29 հոկտ.— Ս. Յարութեան տաճարի Հայկական Գողգոթայի վերնայարկ մատուուին մէջ, ուր մատուցուեցաւ Ս. Պատարագը, Քարոզեց Տ. Ախոն Վրդ. Ալյունկետեւ չես ծառայ այլ որդիւին բնարանին վրայ, բացատրելով Աստուծոյ հայրութեան եւ մարդոց տիեզերական եղայրակցութեան գաղափարը, իրեն քրիստոնէական կրօնի բարոյտկան բարձրագոյն սկզբունքներէն մին:

Տ Ի Ր Ա Խ Ն Ի

ՄՈՒՍ. ՌԻՇԱՐ ՊԱՐԹՈԼՈՆԻ

Ամբողջ երուսաղէմի բնակչութեան վրայ զշտագին տպաւորութիւն գործեց անակնկալ մահագոյքը այս բարձրաստիքան հոգեորականին, որ վախճանեցաւ հոկտ. ամսոյ 11ին, Ս. Քաղաքի խուլացան հիւլանդանոցին մէջ. 48 տարեկան առոյգ հասակին:

Ազգաւ խուլացի, տիտղոսաւոր արքեպիսկոպոս Լաւոդիկէի, Հոռիմ. Կաթոլիկ Եկեղեցւոյ ծանօթ և յարդուած ղէմքերէն էր, որ նախապէս ի Ֆինլանդիա և Արևոր պաշտօններ վարելէ վերջ, հազիւ հինգ ամիսներ առաջ Ս. Քաղաքսեկան, իրեն Վատիկանի Ներկայացուցիչ, և նոգատուի, Պալեստինի, Արաբիոյ և Եթովպիոյ առաքելական պատուիբահէի պաշտօնութիւն Պատեկաներ, Պարտացած և Հազարդական բնաւորութեամբ եկեղեցական մըն էր, որ կարճ ժամանակի մէջ յարգելի դարձաւ ամենուն:

Տիսուր լոււրը ստանալուն պէտ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հիւլանդանոցի մատուուը զըրեկց Տ. Եաւարը վարդապետը և Տ. Եղիչէ արեղան, որոնք իր ցաւակցական զզացումները յայտնեցին հանգուցեալին դադաղին մօտ հըսկող կղերին: — Եր. 14 հոկտեմբեր, մեծաշւք հանդիսութեամբ կատարուեցաւ յուղարկաւու-

րութեան պաշտամունքը՝ Ս. Քաղաքի կաթոլիկաց Մայր Եկեղեցիին մէջ, նախագահութեամբ երուսաղէմի լատին պատրիարք Ամեն. Տ. Լուի Պարլասինայի, որ և պատարագից և գամբանականը խօսեցաւ: Ս. Պատրիարք Հօր կողմէ յուղարկաւորութեան այս պաշտամունքին ներկայ գտնուցան Պատր. Փօխանորդ Տ. Մկրտիչ Մրացան Աղաւնունի և Տ. Կիւրեղ Վրդ. և Տ. Եղիչէ արեղայի:

«Միոն» Սրբոց Յակոբեանց Ուխտին խորին ցաւակցութիւնը կը ներկայացնէ Եկեղեցւոյ հանգուցեալ բարձրաստիքան այս պաշտօնատարին մահով սպաւորուած բոլոր վշտահար սիրտերուն:

Տ. ՄԱՐԿՈՍ ՎՐԴ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

1864—1933

Հոկտ. ամսոյ 3ին, իր յաւիտենական հանգիստը առաջնորդուեցաւ Տ. Մարկոս Վրդ. Գարագաշեան, որ տարիութէու ի վեր հիւրաբար այստեղ կը գտնուէր հիւլանդիախ վիճակի մէջ: Հանգուցեալը ծնած էր Կ. Պոլիս՝ 1864ին, Երևանցէմ եկած էր 1885ին, և մտած՝ աշխարհական միաբանուց կարգը:

Մարկաւագ ձեռնադրուած էր 1892 օգոստ. 29ին (Հ. Տ.), լուսաբարապետ Տ. Մահակ Մրացան Խապայեանէ: 1892 սեպտ. 13ին (Հ. Տ.) քահանայութեան կարգ և արեղայութեան վելար ստացած է Հոգեկայս Տ. Յարութիւն պատրիարք Վեհապետեանէ, և մինչև 1900 ժամարաբութեան պաշտօն վարած է Ս. Տեղեաց մէջ: Յեսոյ Միաբանութենէ արձակուելով զրկուած է Կ. Պոլիս Անկէ՝ ատեն մը զրկուած է զաւառ, և եղած է առաջն. փօխանորդ Անիլիանի, և ազա, կարճ ժամանակ մը, հովիւ ի Սիլանիկ: Ընդհանրապէս մնացած է Կ. Պոլիս, թաղային Եկեղեցիներու մէջ իրեն օգնական՝ քարոզիչներու: 1922ին, Պէտքէն, ուր ժամասաց էր, թեմալական կառավարութեան կ. Պոլիս հաստատուելին վերջ, կուգայ Պէտքէն, և ատեն մը կը ծառայէ սիրտիական մեմերուն մէջ: 1932ի ամրան կուգայ Երուսաղէմ: Իր վատառողջ վիճակը թոյլատու Ծ՛լլար իրեն՝ որ և է հոգեռորական պաշտօն կատարելու: Կը վախճանի հոկտ. Յի Դ. լուսոցով զիշերաւան ընթացքին: Նոյն օրը, մասնաւոր անօրինութեամբ, օծման կարգը կը կատարուի Լուսարարացանետ Տ. Մետրոպոլ Սրբազնութիւն ձեռքբարութիւնը վերեկն վերջի կ'ունենայ յուղարկաւորութիւնը, նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և մասնակցութեամբ բոլոր Միաբանութեան, և կը թաղուի հասարակաց գերեզմանատան հոգեւորականաց բաժինին մէջ:

Խաղաղութեամբ իր հոգւոյն, հանգիւստ իր սոկերաց:

Proprietor — His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor — Father Karekine Bulbulian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.